



**Consulting&Audit**

«ԷՅՎԻ ԲՈՆՍԱՆԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«ԷՅՎԻ ԲՈՆՍԱՆԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**

**«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ  
ԱՊՐԻԼ- 2026

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հայտարարությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ել հաստատման պատասխանատվության վերաբերյալ	2
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2025Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱԾ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏԱՏՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- ✦ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- ✦ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- ✦ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի մասին,
- ✦ Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ✦ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ✦ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու, ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ✦ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ✦ Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- ✦ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են 2026թ. սպրիլի 06-ին:

Գլխավոր տնօրենի պարտականությունները Գլխավոր հաշվապահ՝  
կատարող՝

Մ. Պիրադյան

Մելքոնյան

2026թ. սպրիլի 06

Երևան, Հայաստանի Հանրապետություն





**Consulting&Audit**

«ԷՅՎԻ ԲՈՆՍԱԿԼՈՒՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

## «ԷՅՎԻ ԲՈՆՍԱԿԼՈՒՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6  
ՏԳՀ, Երևան, Արոսյան փ., 41 շենք, տարածք 11  
Հեռ: +374 (10) 572879

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱԳԱՀՆԵՐԻ ԴԱԼԱՏ»  
ՀՎ ԱՆԴԱՄ,  
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2025Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23, ՀԳԳՀ՝ 1 25 0938

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»  
փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՄ-ներ):

### Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագրի պահանջների, և պահպանել ենք վարքագրի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններին օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✦ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✦ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✦ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

06 ապրիլի 2026թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր՝

  
  
Մ. Գևորգյան  
Ա. Գրաչյան



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	8,993,018	9,672,353
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	5	509,960	367,129
Ոչ նյութական ակտիվներ	6	1,037,049	1,164,257
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>10,540,027</b>	<b>11,203,739</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	7	509,558	530,744
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	280,656	299,749
Շահութահարկի գծով դեբիտորական պարտքեր		-	8,624
Ֆինանսական ներդրումներ	9	788,966	420,572
Դրամական միջոցներ	10	54,806	34,559
Այլ ընթացիկ ակտիվներ		10,778	-
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,644,764</b>	<b>1,294,248</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>12,184,791</b>	<b>12,497,987</b>
<b>ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Համարված բաժնետիրական կապիտալ	11	3,450,241	3,450,241
Վերազնահատման պահուստ	11	491,102	491,102
Պահուստային կապիտալ	11	496,612	286,612
Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)	11	2,274,647	2,400,279
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>6,712,602</b>	<b>6,628,234</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	12	4,683,251	5,097,881
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	361,565	329,947
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>5,044,816</b>	<b>5,427,828</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	12	212,927	220,628
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	214,446	221,297
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>427,373</b>	<b>441,925</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>12,184,791</b>	<b>12,497,987</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և աստիճանագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 06-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթացիկ այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից օտարազգությունների կետ նկատել: (ԼՋ 9-32)

Գլխավոր տնօրենի  
պարտականությունները կատարող

Գլխավոր հաշվապահ՝

Ս. Գրիգորյան  
Լ. Սևրոնյան

## Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ  
 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Շարունակվող գործունեություն</b>			
Հասույթ	15	2,017,881	2, 139, 381
Վանաքի ինքնարժեք	15	(1,479,584)	(1 ,755, 870)
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>		<b>538,297</b>	<b>383, 511</b>
Վարչական ծախսեր	16	(426,274)	(512 ,040)
Այլ եկամուտ	17	239,593	243, 262
Այլ ծախսեր	17	(24,020)	(11, 670)
Ֆինանսական եկամուտներ	18	59,763	36, 096
Ֆինանսական ծախսեր	18	(220,624)	(246, 120)
Այլ օգուտ (կորուստ)	19	(33,115)	330, 987
<b>Չուտ շահույթ (վնաս) մինչև հարկումը</b>		<b>133,620</b>	<b>224, 026</b>
Շահութահարկի գծով ծախս	20	(31,618)	18, 823
<b>Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)</b>		<b>102,002</b>	<b>242, 849</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>102,002</b>	<b>242, 849</b>

Գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող՝

Գլխավոր հաշվապահ՝



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-32)


## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ (շժածկված վնաս)	Ընդամենը
<b>2024թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>1,910,748</b>	<b>491,102</b>	<b>286,612</b>	<b>3,729,210</b>	<b>6,417,672</b>
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	242,849	242,849
Կանոնադրական կապիտալի ավելացում	1,539,493	-	-	(1,539,493)	-
Շահաբաժիններ	-	-	-	(32,287)	(32,287)
<b>2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>3,450,241</b>	<b>491,102</b>	<b>286,612</b>	<b>2,400,279</b>	<b>6,628,234</b>
<b>2025թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>3,450,241</b>	<b>491,102</b>	<b>286,612</b>	<b>2,400,279</b>	<b>6,628,234</b>
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	102,002	102,002
Ավելացում	-	-	210,000	(210,000)	-
Շահաբաժիններ	-	-	-	(17,634)	(17,634)
<b>2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>3,450,241</b>	<b>491,102</b>	<b>496,612</b>	<b>2,274,647</b>	<b>6,712,602</b>

Գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող՝

Գլխավոր հաշվապահ՝

  
 Ս. Պետրոսյան  
 Գ. Եսայան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-32)

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ		
<b>Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը</b>	<b>34,559</b>	<b>21,577</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	2,722,662	2,769,406
Այլ մուտքեր	65	4,029
Ստացված տոկոսներ	40,369	49,084
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(680,114)	(673,186)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(182,486)	(511,554)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(609,076)	(553,951)
Վճարված տոկոսներ	(155,027)	(166,791)
Այլ վճարումներ	(9,985)	(16,536)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>1,126,408</b>	<b>900,501</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	(215,478)	(335,991)
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	(1,061,000)	(732,000)
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում	712,000	738,000
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(564,478)</b>	<b>(329,991)</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	21,951	286,141
Վարկերի և փոխառությունների մարումներ	(546,000)	(811,329)
Վճարված շահաբաժիններ	(17,634)	(32,287)
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(541,683)</b>	<b>(557,475)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ան</b>	<b>20,247</b>	<b>13,035</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-	(53)
<b>Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը</b>	<b>54,806</b>	<b>34,559</b>

Գլխավոր տնօրենի  
պարտականությունները կատարող՝

Գլխավոր հաշվապահ՝



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-32)

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1 Ընկերության մասին

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2003թ-ին: Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 03.11.2003 թ ՎՎ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 273.120.03639, գրանցման վկայական՝ 03Ա 062403, հարկային հաշվառման համարը՝ 01547732:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) Ընկերությունը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետության Կառավարությունն է: Կառավարման լիազորությունները պատկանում են Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը: 2003թ. մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 779-Ա որոշմամբ «Հայէներգո» ՓԲԸ-ի Կարգավարական Կենտրոն ստորաբաժանման և «Էներգակապ» մասնաճյուղի հիման վրա ստեղծվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ՀՀԷՕ) փակ բաժնետիրական ընկերությունը:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ իրավաբանական հասցեն է՝ ՎՎ, 375009, ք. Երևան, Աբովյան 27: Ընկերության կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը և Ընկերության տնօրենը:

2025թ. Ընկերության աշխատողների միջին թվաքանակը կազմել է 168 մարդ, իսկ 2024թ.՝ 175 մարդ:

### 1.2 Հիմնական գործունեությունը

Ընկերության հիմնական գործունեությունն է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական կարգավորումը:

Գործունեության համար ՎՎ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի 9-ի N87Ա որոշմամբ տրամադրվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա: ՎՎ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025թ. դեկտեմբերի 03-ի թիվ 404-Ա որոշման համաձայն լիցենզիայի գործունեության ժամկետը երկարաձգվել է մինչև 2030թ. դեկտեմբերի 9-ը:

## 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

### 2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՎՎ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### 2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

### 2.5 Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած նոր և վերանայված ստանդարտներն ու

մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

**Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ՖՀՄՍ-ներում առ 31.12.2025թ.**

**• ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը»**

ՖՀՄՍ 18-ով կարգավորվում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, որը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին՝ վերափոխելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ձևաչափը:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**• ՖՀՄՍ 19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»**

ՖՀՄՍ 19-ը ոչ պարտադիր կիրառման ստանդարտ է, որի շրջանակներում հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունները կարող են ծանոթագրություններում կատարել պակաս բացահայտումներ:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**• ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի**

Որոշակի պայմանների բավարարման դեպքում ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում թույլատրվում է ներառել և հաշվառել որպես ֆինանսական գործիք բնությունից կախված էլեկտրաէներգիայի գծով ածանցյալ պայմանագրերը:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապահանաչում**

Պարզաբանված է որ ֆինանսական պարտավորությունների նման վարձակալության գծով պարտավորության ապահանաչման պահին հաշվեկշռային արժեքի և հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**• ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապահանաչումը**

Էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական վճարումներ կատարելիս որոշակի չափանիշների առկայության դեպքում ֆինանսական պարտավորությունը ենթակա է ապահանաչման հենց վճարման պահին:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**2.6 Գնահատումների և դատողությունների կիրառում**

ՖՀՄՍ համաձայն պատրաստված ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և

ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն

### **Իրական արժեքի չափում**

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներյայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չնշագրվող),
- 2-րդ մակարդակ. 2-րդ մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող),
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումը՝ որպես մեկ ամբողջություն, դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չաճման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

## **3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**

### **3.1 Հիմնական միջոցներ**

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռքբերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախատեսարանային ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում, եթե դրանք անհրաժեշտ չեն ակտիվն աշխատանքային վիճակի բերելու համար: Մեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը եւ արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատվող հիմնական միջոցի միավորների իրական արժեքի փոփոխություններից: Երբ վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն տարբերվում է իր հաշվեկշռային արժեքից, կատարվում է նոր վերագնահատում: Հիմնական միջոցի որոշ միավորների իրական արժեքը կարող է նշանակալիորեն եւ կամայական ձեւով փոփոխվել, հետեւաբար դրանց տարեկան վերագնահատումն անհրաժեշտ է: Նման հաճախակի վերագնահատումները անհրաժեշտ չեն հիմնական միջոցների այն միավորների համար, որոնց իրական արժեքը աննշան է փոփոխվում: Փոխարենը, կարող է անհրաժեշտ լինել վերագնահատել այդ միավորները երեք կամ հինգ տարին մեկ անգամ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը հանձնվել է շահագործման՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

<i>Շենքեր, շինություններ</i>	<i>20-40 տարի</i>
<i>Փոխանցող հարմարանքներ</i>	<i>20 տարի</i>
<i>Մեքենաներ, սարքավորումներ</i>	<i>10 տարի</i>
<i>Տրանսպորտային միջոցներ</i>	<i>10 տարի</i>
<i>Արտադրական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>Տնտեսական գույք</i>	<i>8 տարի</i>
<i>Համակարգչային տեխնիկա</i>	<i>2 տարի</i>
<i>Կապի միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>Այլ</i>	<i>8 տարի</i>

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

**3.2 Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

<i>Համակարգչային ծրագրեր</i>	<i>10 տարի</i>
<i>Բանաձևեր, մոդուլներ, նախագծեր</i>	<i>10 տարի</i>

**3.3 Ներդրումային գույք**

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

Ներդրումային գույքը ապահանջվում է օտարման ժամանակ կամ, երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործումից, և ապագա տնտեսական օգուտներ չեն ականկալվում օտարումից:

### 3.4 Վարձակալություններ

Պայմանագրի կնքման պահին Ընկերությունը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալության տարրեր: Պայմանագիրը համարվում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալության տարր, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է գեղջվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար կատարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը՝ կիրառելով սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, եթե վարձակալը չի կիրառում վերևի պարբերությամբ չափման մոդելը:

Վարձատուն պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես գործառնական վարձակալություն կամ որպես ֆինանսական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձատուն գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները պետք է ճանաչի որպես եկամուտ կամ գծային հիմունքով, կամ մեկ այլ պարբերական հիմունքով:

### 3.5 Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ օտարման խմբերը, որոնք ներառում են ակտիվներ և պարտավորություններ, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Այս պայմանը համարվում է բավարարված միայն այն ժամանակ, երբ վաճառքը խիստ հավանական է և ոչ ընթացիկ ակտիվը կամ օտարման խումբը մատչելի է անմիջական վաճառքի համար իր ներկա վիճակում: Ընկերության ղեկավարությունը պետք է պարտավորված լինի վաճառելու ակտիվը, և պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտված վաճառք ճանաչելու պայմաններին:

Անմիջականորեն նախքան դասակարգումը ակտիվները կամ օտարման խմբերը վերաչափվում են համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այնուհետև, որպես վաճառքի համար դասակարգված ակտիվները կամ օտարման խմբերը չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումներ, նվազագույնով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ընդհատված գործունեությունից եկամուտները և ծախսերը ներկայացվում են շարունակական գործնետության եկամուտներից և ծախսերից առանձին՝ մինչև շահութահարկից հետո զուտ գումարի մակարդակը:

Վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով մաշվածություն կամ ամորտիզացիա չի հաշվարկվում:

### 3.6 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.7 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք ցանկացած իջեցման գումար, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման գուտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

### 3.8 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

### 3.9 Գնորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հասույթ չի համարվում պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Ընկերությունը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակ ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Ընկերության սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման քաղաքականությունը նկարագրված են Շանթթ. 18-ում:

Այնքանով, որքանով Ընկերության կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Ընկերությունը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

Ընկերությունը պետք է ճանաչի հասույթ, երբ (կամ այնքանով, որքանով) բավարարում է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ (կամ այնքանով, որքանով) խոստացված պարտականությունը կատարվում է, Ընկերությունը պետք է ճանաչի որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Գործարքի գինը որոշելիս՝ Ընկերությունը պետք է դիտարկի պայմանագրի պայմանները և իր սովորական բիզնես գործելակերպը: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անուսից հավաքագրված գումարները:

### 3.10 Հարկեր

#### Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործած հարկային վնասների և զեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում, երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները, որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից կամ վնասից դուրս ճանաչված հողվածներին վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հողվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝ նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվները իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

### **Իրացման հարկեր (անուղղակի հարկեր)**

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են գուտ իրացման հարկերից՝ բացառությամբ

(ա) երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված

(բ) դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

### **3.11 Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ընկերության ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը պետք է առևտրային դեբիտորական պարտքերը չափի իրենց գործարքի գնով (ինչպես դա սահմանված է ՖՀՄՍ 09-ով), եթե դեբիտորական պարտքերը չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ:

Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, սկզբնական ճանաչման պահին պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը պետք է ֆինանսական ակտիվը համապատասխան չափի՝

ա) ամորտիզացված արժեքով.

բ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով.

գ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների:

Ընկերությունը պետք արժեզրկման պահանջները կիրառի այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, և այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Ընկերությունը պետք է ճանաչի կորստի պահուստ ֆինանսական ակտիվի ակնկալվող պարտքային կորուստների գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Ընկերությունը շահույթում կամ վնասում, որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ, պետք է ճանաչի ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել սույն ստանդարտին համապատասխան:

### **3.12 Կանխավճարներ**

Կանխավճարները հաշվեկշռում ընդգրկվում են արժեզրկման պահուստով նվազեցման արժեքով: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ այն պարագայում, երբ կանխավճարին վերաբերվող ապրանքները կամ ծառայությունները նախատեսվում է ձեռք բերել մեկ տարի հետո կամ երբ կանխավճարները վերաբերում են ակտիվներին, որոնք դասակարգվում են որպես ոչ ընթացիկ սկզբնական ճանաչման ժամանակ: Ակտիվի ձեռքբերման համար կանխավճարները հաշվեզրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին այն ժամանակ, երբ Ընկերությանն է անցնում ակտիվի տիրապետումը և հնարավոր է դառնում, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն: Այլ կանխավճարները դուրս են գրվում շահույթ կամ վնաս կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերելու պահին: Եթե կան հայտանիշներ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում և համապատասխան արժեզրկման վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### 3.13 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյալ դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամուտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

### 3.14 Ծնորհներ

Ծնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Ընկերությունը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Ծնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Ծնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությունը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությունը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

### 3.15 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար), ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն ըստ էության պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

### 3.16 Սխալներ

#### Նախորդող ժամանակաշրջանի սխալները.

Ընկերության մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

- ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.
- բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

- ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
- բ) էթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

Նախորդող ժամանակաշրջանի սխալը պետք է ուղղվի հետընթաց վերահաշվարկմամբ, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը: Եթե անիրագործելի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվություններում ներկայացված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող սխալի հետևանքները, ապա Ընկերությունը պետք է վերահաշվարկի այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները, որի համար հետընթաց վերահաշվարկումն իրագործելի է:

### 3.17 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը պետք է ճանաչվի առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

- ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
- բ) փոփոխման ժամանակաշրջանում եւ հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որեւէ հոդվածի հետ, այն պետք է ճանաչվի համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, ապա այն դիտվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

### 3.18 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

- ա) պահանջվում է որեւէ ՖՀՄՍ-ով, կամ
- բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի եւ իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ եւ տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անիրագործելի է որոշել կամ այդ փոփոխության ազդեցությունը կոնկրետ ժամանակաշրջանի վրա, կամ դրա կուտակային ազդեցությունը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառում է հետընթաց, ապա պետք է ճշգրտի ամենավաղ ներկայացված նախորդող ժամանակաշրջանի սեփական կապիտալի համապատասխան հոդվածների սկզբնական մնացորդները, որոնց առնչվում են փոփոխությունները,

ինչպես նաև յուրաքանչյուր ներկայացված նախորդող ժամանակաշրջանի համար բացահայտված այլ համադրելի գումարներն այնպես, կարծես թե հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը ի սկզբանե կիրառվել է:

Եթե անհրազործելի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվությունների փաթեթում բացահայտված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետևանքները, ապա Ընկերությունը ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների նկատմամբ կիրառում է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը՝ սկսած այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) սկզբից, որի համար հետընթաց կիրառումն իրագործելի է: Միաժամանակ, Ընկերությունը պետք է կատարի այդ ժամանակաշրջանում սեփական կապիտալի այն հոդվածների սկզբնական մնացորդների համապատասխան ճշգրտումներ, որոնց առնչվում են այդ փոփոխությունները:

Երբ Ընկերության համար անհրազործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների եւ սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը:

### **3.19 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր**

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելը, շահաբաժինները չեն ճանաչվում որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, քանի որ այդ ժամանակ պարտականությունն առկա չէ:

#### 4. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ,	Փոխանցող հարմարանքներ	Մեքենա – սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտարժույթի, ստանդարտիզացիայի, հիմնական միջոցներ	Հողա մասեր	Ընդամենը
Հազար դրամ	4,008,905	5,128,630	6,326,094	222,191	592,532	774,840	17,053,192
2024թ հունվարի 1-ի դրությամբ			997	950	4,080	-	6,027
Ավելացումներ							
Օտարումներ, դուրս գրումներ			317,929		(317,929)		-
Վերադասակարգումներ							-
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,008,905	5,128,630	6,645,020	223,141	278,683	774,840	17,059,219
2025 հունվարի 1-ի դրությամբ	4,008,905	5,128,630	6,645,020	223,141	278,683	774,840	17,059,219
Ավելացումներ			(61,164)		(11,645)		(72,809)
Օտարումներ, դուրս գրումներ							
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,008,905	5,128,630	6,583,856	223,141	272,653	774,840	16,992,025
Կուտակված մաշվածություն	388,582	2,056,587	3,735,363	155,244	359,884	-	6,695,660
2024թ հունվարի 1-ի դրությամբ	79,009	251,356	503,447	14,687	24,680	-	873,179
Տարվա ծախս	-		(3,718)		(178,255)		(181,973)
Օտարումներ, դուրս գրումներ	467,591	2,307,943	4,235,092	169,931	206,309	-	7,386,866
2025թ հունվարի 1-ի դրությամբ	467,591	2,307,943	4,235,092	169,931	206,309	-	7,386,866
Տարվա ծախս	79,009	251,355	318,754	12,185	23,982	-	685,285
Օտարումներ, դուրս գրումներ	546,600	2,559,298	(61,163)	182,116	(11,981)	-	(73,144)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,541,314	2,820,687	2,409,928	53,210	72,374	774,840	9,672,353
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,462,305	2,569,332	2,091,173	41,025	54,343	774,840	8,993,018

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հաշվառում է 3 150 165 հազար ՀՀ դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնց մնացորդային արժեքը զրո է, իսկ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հաշվառում է 3 354 663 հազար ՀՀ դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնց մնացորդային արժեքը զրո է:

#### 5. Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

Հազար դրամ	ՀՄ-ների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ	
	Ընդամենը	Ընդամենը
<b>Հաշվեկշռային արժեք</b>		
2024թ հունվարի 1-ի դրությամբ	58,708	58,708
Ավելացումներ	367,129	367,129
Նվազեցումներ	(58,708)	(58,708)
<b>2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>367,129</b>	<b>367,129</b>
Ավելացումներ	164,100	164,100
Նվազեցումներ	(21,269)	(21,269)
<b>2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>509,960</b>	<b>509,960</b>

#### 6. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր		
	Այլ	Ընդամենը	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>			
2024թ հունվարի 1-ի դրությամբ	1,683,839	241,748	1,925,587
Ավելացումներ	980	-	980
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-
<b>2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,684, 819</b>	<b>241,748</b>	<b>1,926,567</b>
2025թ հունվարի 1-ի դրությամբ	1,684, 819	241,748	1,926,567
Ավելացումներ	-	53,889	53,889
Օտարումներ, դուրս գրումներ	(2,785)	(41,540)	(44,325)
<b>2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,682,034</b>	<b>254,097</b>	<b>1,936,131</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>			
2024թ հունվարի 1-ի դրությամբ	360,735	219,567	580,302
Տարվա ծախս	176,488	5,520	182,008
Նվազեցումներ	-	-	-
<b>2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>537,223</b>	<b>225,087</b>	<b>762,310</b>
2025թ հունվարի 1-ի դրությամբ	537,223	225,087	762,310
Տարվա ծախս	176,507	4,590	181,097
Նվազեցումներ	(2,785)	(41,540)	(44,325)
Վերադասակարգումներ	-	-	-
<b>2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>710,945</b>	<b>188,137</b>	<b>899,082</b>
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>			
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,147,596	16,661	1,164,257
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	971,089	65,960	1,037,049

**7. Պաշարներ**

Հազար դրամ  
 Նյութեր  
 Վառելիք  
 Պահեստամասեր

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
3,860	3,544
8,961	9,367
496,737	517,833
<b>509,558</b>	<b>530,744</b>

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

**8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Հազար դրամ

Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով  
 Դեբիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով  
**Ընդամենը ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքեր**  
 Տրված ընթացիկ կանխավճարներ  
 Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով՝ բացառությամբ շահութահարկի  
 Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
250,242	267,893
21,734	19,311
<b>271,976</b>	<b>287,204</b>
66	102
6,747	10,138
1,867	2,305
<b>280,656</b>	<b>299,749</b>

**Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Ընկերության դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2025թ. կազմել է 51 օր, իսկ 2024թ՝ 44 օր:

Դեբիտորական պարտքերի կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

**9. Ֆինանսական ներդրումներ**

Հազար դրամ  
 Բանկային ավանդներ  
 Հաշվեգրված տոկոսներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
761,000	412,000
27,966	8,572
<b>788,966</b>	<b>420,572</b>

Ընկերության ֆինանսական ներդրումները կարճաժամկետ բանկային ավանդներն են, որոնցում Ընկերությունը տեղաբաշխում է իր ժամանակավոր ազատ դրամական միջոցները:

**10. Դրամական միջոցներ**

Հազար դրամ  
 Դրամական միջոցներ բանկային հաշիվներում  
 Կանխիկը դրամարկղում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
54,806	34,559
-	-
<b>54,806</b>	<b>34,559</b>

## 11. Սեփական կապիտալ

### Կանոնադրական կապիտալ

Ընկերությունը ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի: ՀՀ կառավարության 04.01.2024թ. թիվ 8-Ա և 04.01.2024 թիվ 11-Ա որոշումներով 2024թ. Ընկերության կանոնադրական կապիտալը ավելացվել է 1,539,493 հազար դրամով: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունեցել է 316,349 հատ սովորական, անվական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,906,440,3 դրամ անվանական արժեքով: Այն ամբողջությամբ տեղաբաշխված է և պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

### Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին ստեղծել է պահուստային կապիտալ, որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պահուստային կապիտալը կազմել է 496 612 հազար դրամ, իսկ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 286 612 հազար դրամ:

### Շահաբաժիններ

Ընկերությունը 2025 թվականին հայտարարել է 17,634 հազար դրամ շահաբաժին, իսկ 2024 թվականին՝ 32,287 հազար դրամ շահաբաժին:

## 12. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ոչ ընթացիկ</b>		
Երկարաժամկետ վարկեր	4,683,251	5,097,881
	<b>4,683,251</b>	<b>5,097,881</b>
<b>Ընթացիկ</b>		
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	212,927	220,628
	<b>212,927</b>	<b>220,628</b>
<b>Ընդամենը վարկեր</b>	<b>4,896,178</b>	<b>5,318,509</b>

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործող վարկերի և փոխառությունների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը:

Հազար դրամ	Վարկային պայմ. N-ը, տրման տարեթիվը	Վարկի տարեկան տոկոս	Վարկի մարման ժամկետը	Հաշվեկշռայի ն արժեք 31.12.2025թ.	Հաշվեկշռայի ն արժեք 31.12.2024թ.	
Վարկը տրամադրողի անվանումը	Չափման միավոր					
Ճապոնական բանկ	Ճապոնական յեն	04.05.2007թ.	1,8	10.02.2029թ.	655,357	803,760
Ասիական գարգացման բանկ	ՄԳՌ	16.05.2015թ.	3,14	16.05.2040թ.	3,690,228	3,923,372
ՀՀ կառավարություն	Դրամ	16.05.2015թ.	3,14	16.05.2040թ.	550,593	591,377
<b>Ընդամենը</b>				<b>4,896,178</b>	<b>5,318,509</b>	

**13. Հետաձգված հարկ**

**Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)**

Հազար դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Չուտ հետաձգված հարկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցներ	-	-	359,840	358,792	(359,840)	(358,792)
Վարկեր և փոխառություններ	-	-	25,457	39,821	(25,457)	(39,821)
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	5,478	5,484	-	-	5,478	5,484
Հարկային վնաս	18,254	63,182	-	-	18,254	63,182
	<b>23,732</b>	<b>68,666</b>	<b>385,297</b>	<b>398,613</b>	<b>(361,565)</b>	<b>(329,947)</b>

**Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում**

Հազար դրամ	2024թ	Եկամուտում ճանաչված	2024թ	Եկամուտում ճանաչված	2025թ
	հունվարի-ի դրությամբ		դեկտեմբերի 31-ի դրությամբ		դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(357,901)	(891)	(358,792)	(1,048)	(359,840)
Վարկեր և փոխառություններ	(61,224)	21,403	(39,821)	14,364	(25,457)
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	3,984	1,500	5,484	(6)	5,478
Հարկային վնաս	66,371	(3,189)	63,182	(44,928)	18,254
<b>Չուտ հետաձգված հարկ</b>	<b>(348,770)</b>	<b>18,823</b>	<b>(329,947)</b>	<b>(31,618)</b>	<b>(361,565)</b>

**14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Հազար դրամ	2025թ	2024թ
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	70,886	88,690
Կարճաժամկետ վարձակալության գծով վճարման ենթակա գումարներ	-	828
Պարտքեր աշխատակիցներին աշխատավարձի գծով	35,071	33,353
Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ	30,433	30,466
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային կրեդիտորական պարտքեր</b>	<b>136,390</b>	<b>153,337</b>
Ստացված կանխավճարներ	250	750
Պարտքեր հարկերի և պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	77,646	67,009
Շահութահարկ	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	160	201
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>214,446</b>	<b>221,297</b>

Ընկերության կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2025թ կազմել է 20 օր, իսկ 2024թ՝ 27 օր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

**Հարկերի և պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից՝**

	<b>2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
Հազար դրամ		
Շահութահարկ	-	-
Եկամտային հարկ	27,376	21, 260
Ավելացված արժեքի հարկ	44,190	41, 683
Այլ	6, 080	4, 066
	<b>77,646</b>	<b>67, 009</b>

**15. Հասույթ, վաճառքի ինքնարժեք**

**Հասույթ**

	<b>2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>	<b>2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>
Հազար դրամ		
Կարգավարական ծառայությունների մատուցումից	1,696,851	1 ,751, 874
Արտահանման ծառայությունից	317,742	384, 855
Այլ	3,288	2 ,652
	<b>2,017,881</b>	<b>2 ,139, 381</b>

**Վաճառքի ինքնարժեք**

	<b>2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>	<b>2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>
Հազար դրամ		
Աշխատավարձ	656,648	599 ,106
Մաշվածություն և ամորտիզացիա	780,257	787, 846
Հումք և նյութեր	12,354	15 ,466
Այլ կազմ. կողմից կատարված աշխատանքներ	30,325	335 ,329
Այլ		18, 123
	<b>1,479,584</b>	<b>1 ,755 ,870</b>

**16. Վարչական ծախսեր**

	<b>2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>	<b>2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>
Հազար դրամ		
Աշխատավարձ	234,873	283, 293
Մաշվածություն և ամորտիզացիա	85,789	85, 368
Գործուղման և ներկայացուցչական	6,350	6, 054
Փոստի, հեռահաղորդակցության	9,196	10, 815
Գրասենյակային, կոմունալ	34,072	39, 258
Բանկային, աուդիտորական և խորհրդատվական	11,098	1, 942
Հիմնական միջոցների նորոգում և սպասարկում	4,961	6, 976
Պահպանության գծով	15,069	15, 069
Վարձակալության գծով	-	17, 495
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	13,549	19, 043
Այլ	11,317	26, 727
	<b>426,274</b>	<b>512, 040</b>

**17. Այլ եկամուտներ և ծախսեր  
Այլ եկամուտներ**

	<b>2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>	<b>2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</b>
Հազար դրամ		
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	239,038	225, 777
Զից ենթակալորված գործունեությունից եկամուտներ	-	17, 287
Այլ եկամուտներ	555	198
	<b>239,593</b>	<b>243, 262</b>

## Այլ ծախսեր

Հազար դրամ

Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր  
Դրամական օգնության գծով ծախսեր  
ՀՄ լուծարման ծախսեր  
Այլ ծախսեր

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	1,000	3,032
	7,550	7,720
	14,776	-
	694	918
<b>Ընդամենը</b>	<b>24,020</b>	<b>11,670</b>

## 18. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր Ֆինանսական եկամուտներ

Հազար դրամ

Բանկային ավանդներ  
Ընդամենը

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	59,763	36,096
<b>Ընդամենը</b>	<b>59,763</b>	<b>36,096</b>

## Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ

Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր  
Ընդամենը

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	220,624	246,120
<b>Ընդամենը</b>	<b>220,624</b>	<b>246,120</b>

## 19. Այլ օգուտ (կորուստ)

Հազար դրամ

Փոխարժեքային տարբերություններից եկամուտ  
Փոխարժեքային տարբերություններից ծախս  
Շնորհներից և այլ անհատույց ստացումներից  
եկամուտներ

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	134,999	529,201
	(171,131)	(198,214)
	3,017	-
<b>Ընդամենը</b>	<b>(33,115)</b>	<b>330,987</b>

## 20. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

Հազար դրամ

**Ընթացիկ շահութահարկ՝**  
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս  
**Հետաձգված հարկեր**  
Ժամանակային տարբերությունների ծագում և  
հակադարձում  
**Համապարփակ ֆինանսական արդյունքների  
մասին հաշվետվությունում ներկայացված  
շահութահարկի գծով ծախս / (օգուտ)**

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	-	-
	(31,618)	18,823
<b>Ընդամենը</b>	<b>(31,618)</b>	<b>18,823</b>

## 21. Ֆինանսական գործիքներ

### Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.11-ում:

### Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ

Մնացորդներ դրամարկղում և բանկերում  
Առևտրային դեբիտորական պարտքեր  
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
54,806	34, 559
271,976	287,204
788,966	420,572
<b>1,115,748</b>	<b>742,335</b>

#### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

Առևտրային կրեդիտորական պարտքեր  
Վարկեր և փոխառություններ

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
136,390	153,337
4,896,178	5,318,509
<b>5,032,568</b>	<b>5,471,846</b>

## 22. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

### Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են Ճապոնական յենը և SDR-ը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հողված 2025թ.	Ճապոնական յեն` ՀՀ դրամով վերահաշվարկված	SDR ՀՀ դրամով վերահաշվարկված
Ֆինանսական ակտիվներ	-	-
Ֆինանսական պարտավորություններ Վարկեր և փոխառություններ	655,357	3,690,228
<b>Չուտ արդյունք</b>	<b>(655,357)</b>	<b>(3,690,228)</b>
Հողված 2024թ.		
Ֆինանսական ակտիվներ	-	-
Ֆինանսական պարտավորություններ Վարկեր և փոխառություններ	803,760	3,923,372
<b>Չուտ արդյունք</b>	<b>(803,760)</b>	<b>(3,923,372)</b>

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված հաշիվների մնացորդների վերահաշվարկման համար Ընկերության կողմից կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները`

	2025թ.	2024թ.
Ճապոնական յեն	25,471	25,14
SDR	522,47	517,17

### Զգայունության վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը` Ճապոնական յենի և SDR-ի նկատմամբ դրամի 10% (2024թ.` 10%) անին/նվազմանը: 10%-ը (2024թ.` 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը` փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.` 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

	Մեփական կապիտալ	Ճահույթ կամ վնաս
<b>2025թ.</b>		
Ճապոնական յեն (10% ամրապնդում)	(65,536)	(65,536)
SDR (10% ամրապնդում)	(369,023)	(369,023)
<b>2024թ.</b>		
Ճապոնական յեն (10% ամրապնդում)	(80,376)	(80,376)
SDR (10% ամրապնդում)	(392,337)	(392,337)

### Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում ստացված վարկերի ու փոխառությունների վրա` փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքի առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա` մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս: Ընկերությունը չունի տոկոսադրույքի ռիսկ ձևավորող փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ:

### Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի գծով: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

**Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

31.12.2025թ. դրությամբ վաճառքների գծով 299 942 հազար դրամ դեբիտորական պարտքից 151 444 հազար դրամը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գծով է, իսկ 31 654 հազար դրամը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի:

31.12.2024թ. դրությամբ վաճառքների գծով 295 776 հազար դրամ դեբիտորական պարտքից 168 158 հազար դրամը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գծով է, իսկ 34 549 հազար դրամը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի:

**Ֆինանսական ներդրումներ**

Ընկերությունը սահմանափակում է իր վարկային ռիսկը՝ ներդրումներ կատարելով միայն բանկային ավանդներում:

**Ենթարկվածությունը վարկային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2025թ.	2024թ.
Ֆինանսական ներդրումներ	788,966	420,572
Առևտրային դեբիտորական պարտքեր	271,976	287,204
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,806	34,559
<b>Ընդամենը</b>	<b>1,115,748</b>	<b>742, 335</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2025թ.	2024թ.
Տեղական	271,976	287,204
Արտերկրյա	-	-
<b>Ընդամենը</b>	<b>271,976</b>	<b>287,204</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2025թ.	2024թ.
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	271,976	287,204
Ֆիզիկական անձինք	-	-
<b>Ընդամենը</b>	<b>271,976</b>	<b>287,204</b>

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և

արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Ակնկալվում է, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում, կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

**2025թ.**

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք		2-5 տարի	5 տարուց ավելի
	0-1 տարի	0-1 տարի		
Վարկեր և փոխառություններ	4,896,178	510,000	1,520,000	2,866,178
Առևտրային կրեդիտորական պարտքեր	136,390	136,390	-	-
	<b>5,032,568</b>	<b>646,390</b>	<b>1,520,000</b>	<b>2,866,178</b>

**2024թ.**

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք		2-5 տարի	5 տարուց ավելի
	0-1 տարի	0-1 տարի		
Վարկեր և փոխառություններ	5,318,509	220,628	1,200,000	3,897,881
Առևտրային կրեդիտորական պարտքեր	153,337	153,337	-	-
	<b>5,471,846</b>	<b>373,965</b>	<b>1,200,000</b>	<b>3,897,881</b>

**Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը՝ բացահայտված ծանոթագրություն 12-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (գուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա), հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր վարկեր	4,896,178	5,318,509
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(843,772)	(455,131)
Չուտ պարտավորություն	4,052,406	4,863,378
Ընդհանուր սեփական կապիտալ	6,712,602	6,628,234
Ընդհանուր կապիտալ	<b>10,765,008</b>	<b>11,491,612</b>
Ֆինանսական լծակ	37,64	42,32

**Իրական արժեք**

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

**23. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք

ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

- Ծանոթագրություն 4 հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը
- Ծանոթագրություն 6 ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ
- Ծանոթագրություն 12 վարկեր և փոխառություններ
- Ծանոթագրություն 13 հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 26 – պայմանականություններ

#### **24. Պարտավորվածություններ**

##### **Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ Ընկերությունը որպես վարձակալ**

Ընկերությունը գործառնական վարձակալությամբ վերցրել է օպտիկամալուխային գծեր և ռադիոէլեկտրոնային միջոցների հաճախականություններ: Պայմանագրերը կարող են չեղյալ համարվել փոխադարձ համաձայնությամբ:

##### **Ընկերությունը որպես վարձատու**

Ընկերությունը գործառնական վարձակալությամբ է հանձնել գրասենյակային տարածքներ: Պայմանագրերը կարող են չեղյալ համարվել փոխադարձ համաձայնությամբ:

#### **25. Պայմանականություններ**

##### **Գործարար միջավայր**

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռիսկերը և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

##### **Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից, իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից, ապահովագրություն չունի: 2025 թվականին կատարվել է կենտրոնական կարգավարական կետի կարգավարների առողջության ապահովագրություն, իսկ դեկտեմբեր ամսից՝ բոլոր աշխատակիցների առողջության պարտադիր ապահովագրություն:

**Հարկային միջավայր**

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

**Դատական վարույթներ**

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

**26. Գործարքներ կապակցված կողմերի միջև**

**Վերահսկողություն**

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում նրա միակ բաժնետերը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության բաժնետոմսերը կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: Բաժնետիրոջ հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 11-ում:

**Գործարքներ ղեկավարության հետ**

Հազար դրամ	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	63,706	78,499
	<b>63,706</b>	<b>78,499</b>

**Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

Հազար դրամ	2025թ.	2024թ.	Մնացորդը 31.12.2025թ.	Մնացորդը 31.12.2024թ.
Ծառայությունների մատուցում լիազոր մարմնի ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններին	451,631	532,022	35,304	37,569

**27. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած գործարքներ**

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2025թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Գլխավոր տնօրենի՝  
պարտականությունները կատարող՝  
Գլխավոր հաշվապահ՝

